ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Օրենք

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

30/09/2021 - 15/10/2021

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 1 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 1 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

7 կողմ

0 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

15/10/2021

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
-	1	2	3	4
1	Անդրանիկ Ղազարյան 03.10.2021 12:43:59	Առաջարկվող նախագծով "Պետական կենսաթոշակների մասին" օրենքի 35-րդ հոդվածի կարգավորումները տարընթեռցումների և երկակի մեկնաբանության տեղիք են տալիս և կարող են տեսականորեն հանգեցնել կենսաթոշակառուների կողմից չարաաշահումների, քանի որ բովանդակության նեղ մեկնաբանման արդյունքում կարող ենք գալ այն եզրահանգմանը, որ կենսաթոշակառուն իրավունք ունի իր դիմումը ներկայացնել նաև փոստային կապի միջոցով: Արդյունքում հնարավոր է այնպիսի իրավիճակ, երբ անձը գտնվելով արտասահմանում ՀՀ-ում գտնվող անձի միջոցով դիմում ներկայացնելով կարող է շարունակել ստանալ անկանխիկ	Առաջարկությունը չի ընդունվում:, քանի որ ՀՀ կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 670-Ն որոշման N 4 Հավելվածի 4-րդ կետով և ՀՀ կառավարության 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն որոշման հավելվածի 3.1-ին կետով հստակ սահմանված են այն ընթացակարգերը, որով բանկը կամ Ազգային օպերատորը հաստատում են կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը՝ առանց նրա բանկ կամ Ազգային օպերատորին ներկայանալու: Նախագծով առաջարկվող	

		եղանակով կենսաթոշակ: Ուստի ենթադրվում է, որ գործածված "անձամբ" եզրույթը նշանակում է բանկի տարածքում կենսաթոշակառուի կողմից իր ձեռքով բանկին ներկայացնելը, որը առանձին օրենքով կարգավորելը, որպես այլընտրանք ստորագրված հայտարարությանը, չի կարող համարվել, քանի որ էապես գործառութային առումով ոչ բանկերի և ոչ էլ կենսաթոշակառուների համար ոչինչ չի փոխում: Ուստի առաջարկում եմ 35-րդ հոդվածի 6-րդ մասի առաջարկվող փոփոխությունները չնեռրառել վերջնական փաթեթում:	լրացումը նպատակ ունի սահմանել ևս մեկ հնարավորություն կենսաթոշակառուի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելը հաստատելու համար, այն է" կենսաթոշակառուի՝ անձամբ ներկայացրած ցանկացած գրավոր դիմումի հիման վրա նրա Հայաստանի Հանրապետությունում լինելը հաստատում է կենսաթոշակ նշանակող ստորաբաժանումը: Ըստ այդմ, առաջարկում ներկայացված դիտարկումները որևէ կերպ չեն առնչվում նախագծով առաջարկվող կարգավորմանը, հաշվի առնելով վերջինիս հաստակությունը: Ընդ որում, չարաշահումների հետևանքով Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ կենսաթոշակն ավել վճարված լինելու դեպքում հարկ է նկատի ունենալ նաև օրենքի 43-րդ հոդվածի 4-րդ մասը:	